Հավելված
ՀՀ փոխվարչապետի 2020 թ.
սեպտեմբերի 30 -ի N 598 - Ա
որոշման

«ՀԱՄԱԿԱՐԳՉԱՅԻՆ ՏԵԽՆԻԿԱՅԻ ՁԵՌՔԲԵՐՈՒՄ»
ԾՐԱԳԻՐ

1.	Ծրագրի նպատակը	«Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովինար գյուղի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց» Պետական ոչ առևտրային կազմակերպության ռոբոտաշինության համակարգչային սենյակի համար նախատեսված համակարգչային տեխնիկայի գնում
2.	Ծրագրի բարեգործական որակման նպատակը	Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից
3.	Բարեգործը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ, ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից հանգանակված միջոցներ
4.	Ծրագիրը կատարողը	«Հայաստան» համահայկական հիմնադրամ (ՀՀ, քաղաք Երևան, Բաղրամյան պողոտա 26/1, ՀՎՀՀ՝ 02507456)
5.	Ծրագրի իրականացման վայրը եւ բնագավառը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղ, սոցիալական բնագավառ
6.	Ծրագրի բյուջեն	Ծրագրի բյուջեն կազմում է 918,746 դրամ
7.	Բարեգործություն ստացողը	Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց Պետական ոչ առևտրային կազմակերպության
8.	Ծրագրի իրականացման տեւողությունը	Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020 թ. հոկտեմբերի 05-ից մինչև 2020թ. դեկտեմբերի 07-ը

9.	Միջոցառումների նկարագրությունը եւ ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը	Ծրագրի իրականացման ժամկետում նախատեսվում է Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի Ծովինար գյուղի Ա. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց պետական ոչ առևտրային կազմակերպության համար գնել համակարգչային տեխնիկա: Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2020թ. հոկտեմբերի 05-ից մինչև 2020 թ դեկտեմբերի 07-ը. Արժեքը՝ 918,746 դրամ
10.	Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները եւ նախատեսվող գինը	Նախատեսվում է համակարգչային տեխնիկայի գնում համաձայն 31.08.2020 թ. N ԱՎ-ԾԴ -01/20 կնքված պայմանագրի թիվ 1 հավելվածի: Արժեքը կազմում է 918,746 դրամ
11.	Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը	Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում
12.	Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ	Համագործակցություն չի նախատեսվում
13.	Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը	Հայաստանի Հանրապետության կառավարության 2003 թվականի հունվարի 16-ի N 66-Ն որոշմամբ հաստատված բարեգործական ծրագրերը բարեգործական որակելու և գրանցելու կարգի 25-րդ կետով սահմանված կարգով կներկայացվեն տեղեկություններ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԱՎԻՆՅԱՆ